

ՄԱԿՐԻՐԸ ՈՐՊԵՍ ԴԵՐԻՆԱԿԻ ՄԻՏՈՒՄԸ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻԱԿՈՐ

Հայտնի է, որ խոսքին պատկերավորություն, արտահայտչականություն և հուզական երանգներ հաղորդող տարաբնույթ ոճական միջոցների շարքում մակդիրն ունի իր ուրույն տեղը: Ակնհայտ է նաև այն, որ մակդիրն աչքի է ընկնում իր լայն գործածությամբ, մասնավորապես գեղարվեստական խոսքում՝ արտահայտելով ոչ միայն անհատ ստեղծագործողի, այլև տվյալ լեզվով խոսող հանրության լեզվամտածողության բնորոշ գծեր: Դետաքար պատահական չէ, որ մակդիրը, որպես գեղարվեստական ստեղծագործության պատկերային համակարգի կարևորագույն տարր, բազմաթիվ ուսումնասիրողների համար (Веселовский А.Н., Жирмунский В.М., Томашевский Б., Голуб И., Խլղաթյան Ֆ., Ջրբաշյան Է., Պողոսյան Պ., Մարության Ա. և այլք) հետաքրքրության առարկա է եղել դեռևս անտիկ ժամանակներից:¹

Վերոհիշյալ հեղինակների աշխատությունները մակդիրի էության բացահայտման գործում վերջակետ չեն դնում:² Մակդիրի ձևակառուցվածքային հարցերի ուսումնասիրությունն առայժմ ավարտուն տեսք չի ստացել: Բազմաթիվ ուսումնասիրողների համար, օրինակ, մակդիրի և գոյականական անդամի լրացման որոշչի, ինչպես նաև ածական անվան միջև ընդհանրություններն ակնհայտ են: (Ахманова О. С. 1966, Квятовский А. 1966, Պետրոսյան Հ.Զ. 1975, Պողոսյան Պ. 1990) Ավելին, տարաբնույթ ուսումնասիրությունների քննությունից պարզ է դառնում, որ առաջին հայացքից որքան էլ պարզ ու հասկանալի է մակդիրի երևույթը, հետազոտողները տարակարծիք են նրա ձևաբովանդակային առանձնահատկությունների, շարահյուսական և գեղագիտական գործառնությունների քննության հարցում: Հաճախ առաջ են քաշվում տարահունչ սահմանումներ: (Энциклопедический Словарь, с. 927, 1904)³

Լեզվաբանական տերմինների բառարանում մակդիրը բնորոշվում է որպես որոշիչ այնպիսի տարատեսակ, որն օժտված է հուզարտահայտչական և այլաբերական երանգներով, որով և տարբերվում է սովորական որոշիչից: (Ахманова О. С. 1966) Մեկնողական դիրքերից մակդիրը որակվել է որպես «բանաստեղծի համար փորձաքար», որի օգտագործման կերպը դրսևորում է նրա վերլուծական ունակությունները, վեր հանում երևույթի մեջ մինչ այդ աննկատ մնացած, սակայն ստեղծագործողի երևակայության մեջ իմաստավորված, որակներ: (Энциклопедический Словарь, 1904)⁴

Ուսումնասիրության խնդրո առարկան հունարեն επιθετον [էպիտետոն] հասկացությունն է (επι՝ [էպի] վրա և τιθημι՝ [տիթեմի] դնել, տեղադրել), որը նշանակում է ավելացվածը: Բառն անգլերեն է թափանցել է լատիներենից: (Webster's New World Dictionary of American English, 1988)⁵ Գտնում ենք, որ հայերեն թարգմանությունը նույնպես դիպուկ է արտացոլում հունաօին տերմինի կառուցվածքը:⁶

Մակդիրները ներկայացվում են ոչ միայն որպես հատկանշող, այլև հատկանիշների լրացմամբ մակադրյալի նշանակությունն առավել դիպուկ ու ազդեցիկ դարձնող միավորներ, որոնք առավել թանձրացնում են խոսքի պատկերավորությունը, ի հայտ է բերում գրողական ոճի ինքնատիպությունը, պարզում նրա գրականագիտական հակումները և ժամանակի ընդհանուր ոգին:⁷ Թերևս սա է պատճառ հանդիսացել, որպեսզի մակդիրների գործառու-թյունը հատուկ ուսումնասիրության ենթարկվի ոճաբանության կողմից:⁸ Մակդիրների դերը բառապաշարի հարստացման գործում առայժմ բավարար ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն առավել որոշակի է մակդիրների գործառույթը խոսքում, որտեղ առանձնացվում են նրանց դերը որպես հաղորդակցության, շփման և տեքստի ներքին կազմակերպման միջոց:⁹

Ակներես է այն, որ բազմաթիվ սահմանումներ զուգահեռներ են տանում մակդիրի և գոյականական անդամի լրացման՝ որոշիչի միջև:¹⁰ Նշելով, որ լեզվաբանական տեսակետից մակդիր-մակադրյալն իրենց բնույթով առավել ազատ կապակցություններ են, քան որոշիչ-որոշյալ կապը, Գրականագիտա-կան համառոտ համրագիտարանը դրանց տարբերությունը բերում է նաև

գործառութային ասպարեզ, ցույց տալով, որ ճանաչողական տեսակետից որոշիչները սահմանափակում, մինչդեռ մակդիրներն առանձնացնելով ուժգնացնում են տվյալ առարկայի որևէ հատկանշական կողմ, իսկ հաղորդակցական տեսակետից որոշիչները հարում են օբյեկտիվության, այնինչ մակդիրներով հեղինակն արժեվորում է տվյալ առարկան, հայտնում սուբյեկտիվ, առավել խորքային վերաբերմունք: Այստեղ եզրափակող բնութ ունի այն նկատառումը, որ մակդիրների և որոշիչների միջև եղած տարբերությունը, կախված լինելով համատեքստից, հարաբերական է: (Краткая Литературная Энциклопедия, 1975, с.921-923) Պարզ է դառնում, որ ինչպես ոչ բոլոր մակդիրներն ունեն քերականական որոշիչի ձև, այնպես էլ ոչ բոլոր քերականական որոշիչները կարող են համարվել մակդիրներ: Որոշյալ հասկացության ծավալը նեղացնող որոշիչը չի կարող համարվել մակդիր: Հանրագիտական բառարանն ավելացնում է, որ որոշիչների և ածականների հետ ունեցած եզրերը մակդիրների համար «միայն մասնակի են»: (Энциклопедический Словарь, 1904, с.927)

Այսպիսով հանգում ենք այն կարծիքի, որ սովորական որոշիչի հետ ունեցած մակդիրի բուն տարբերությունը որոշարկվում է վերջինիս գեղագիտական հագեցվածության չափանիշով, որն էլ հնարավորություն է տալիս տարբերակել տրամաբանական բնորոշումը գեղարվեստականից: Պետք է հաշվի առնել նաև այն, որ մի դեպքում տրամաբանական բնորոշման դեր կատարող բառը մեկ այլ կապակցության մեջ, հաճախ երբ բառին հաղորդվում է փոխաբերական իմաստ, կարող է գեղարվեստական մակդիրի դեր կատարել:¹¹

Տերմինի շուրջ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեսական մեկնաբանությունների մեծ մասն անդրադառնում են մակդիրների խոսքի մասային արտահայտման խնդրին: Այսպես՝ գոյականը կարող է մակդիրի կաղապար լինել: Ի տարբերություն ածականի, գոյականն առարկայի հատկանիշների ամբողջությամբ է նկարագրում մակադրյալը: Ընդունված է համարել, որ մակդիրները հիմնականում արտահայտվում են ածականով: (Գրականական բառարան, 1972, էջ 188, Краткая Литературная Энциклопедия, с.921-923) Թեև վիճակագրական տվյալներ առայժմ հայտնի չեն, քանակային տեսակետից ածականով արտահայտված մակդիրները գերազան-

ցում են մյուս խոսքի մասերին: (Պողոսյան Պ. 1991, էջ 45) Ածականով արտահայտված մակդիրները նախադասության մեջ կարող են հանդես գալ որպես կոչականներ: (Голуб И.Б. 1976, с.150) Համաձայն մի տեսակետի, (Словарь Лингвистических Терминов, 1966) մակդիրը «միշտ փոխաբերական ածական է» և ոմանք սխալմամբ են մակդիրին այլ խոսքի մասեր վերագրում:

Հայտնի է, որ մակբայները ցույց են տալիս գործողության հատկանիշ: Իսկ եթե հեղինակին հաջողվում է գործողությանը հաղորդել հուզարտահայտչական երանգներ կամ մակբայը տվյալ համատեքստում կիրառել փոխաբերաբար, ապա այն կգործածվի որպես մակդիր: Առանձնացվում են նաև բայով արտահայտված մակդիրներ: (Большая Советская Энциклопедия, 1978, с.221, Словарь Литературоведческих Терминов, 1974, с.470)

Դերբայները նույնպես կարող են հատկանշող լեզվական միավորներ լինել, ձեռք բերել ածականներին հատուկ դրական, համեմատական և գերադրական աստիճաններ: Սակայն նրանց տարբերությունն ածականների համեմատությամբ այն է, որ դերբայներն ունեն ժամանակային կողմ: Առարկաների էական հատկանիշներն ընդգծելով՝ դերբայները դառնում են մակդիր, իսկ որպես այդպիսին՝ մակադրյալին երբեմն հաղորդում են անձնավորման երանգներ: (Ի լրումն վերը նշվածի, Энциклопедический Словарь, Պողոսյան Պ. 1990) Մակդիրները կարող են արտահայտվել նաև բարդ բառերով և բառակապակցություններով: (Գրականագիտական բառարան, 1972)

Վերոհիշյալից պարզ է դառնում, որ ի լրումն ածականների, մակդիր կարող են լինել նաև գոյականները (*քար սիրտ, խոզ մարդ*), մակբայները (տերևները դողացին *մեղմաբար*), դերբայները (*վախեցած* աչքեր, *նիրհող* քաղաք), բառակապակցությունները (*մթնում կորած* խրճիթներ): (Խլղաթյան Ֆ.Հ. 2000, տես նաև Ջրբաշյան Էդ. 1980, էջ 232, 1972, էջ 188) Քանի որ մակդիրները խոսքին տալիս են գեղարվեստական արժեք, հուզական ազդեցություն, ի հայտ են բերում նկարագրվող երևույթի էական հատկանիշները, հեղինակի գնահատականն, ապա ձևաբանական կամ շարահյուսական հիմունքով նրանց սահմանափակելը թույլ չի տալիս ընդգրկել երևույթն ամբողջությամբ:

Հատկանշող բառը մակդիր է դառնում մակադրյալի, իսկ ավելի լայն՝ համատեքստի շնորհիվ: Մեր այս տեսակետը հարում է «Ռճաբանական բառարանի» հակադրած օրինակներին՝ *փայտե* դուռ և *փայտե* սիրտ, կամ «Գրականագիտական բառարանի» *պողպատե* վահան (տրամաբանական բնորոշում) և *պողպատե* կամք (մակդիր) արտահայտություններին: Խոսքի մեջ մակդիրի հատկությունը դրսևորվում է միայն այն դեպքում, երբ այն կցվում է առարկան նշանակող բառի հետ: (Словарь Литературоведческих Терминов, 1974, с.469-470)

Տեսական գրականության մեջ մակդիրները դասակարգվում են տարբեր սկզբունքներով: Այս դասակարգումները հազվադեպ են համընկնում, միևնույն երևույթը դիտարկում, ու հետևաբար, անվանում տարբեր տեսակետներից: Մակդիրներին անդրադառնալիս՝ է. Ջրբաշյանը եզրակացնում է. «Անչափ շատ են մակդիրի տեսակներն ըստ բովանդակության, և այստեղ որևէ բավարար դասակարգում՝ կատարել հնարավոր չէ»: (Ջրբաշյան էդ., 1980, էջ 232) Քննությունը ցույց է տվել, որ դասակարգումներն ընդհանուր առմամբ գնում են երկու հունով. ա) նշում են մակդիրաստեղծ լեզվական միջոցները, կերպերը և բ) բացահայտում մակդիրների գործառնությունները, կիրառման նպատակները, հեղինակի մոտեցումները: Ընդ որում, հաճախ միևնույն դասակարգման մեջ նկատելի են այս երկու ուղղություններին հարող տեսակներ: Հետևաբար, դասակարգումների տեղաբաշխումն այս խմբերի մեջ թույլ է տալիս ի հայտ բերել մակդիրների կազմման ձևերը և գործածության պատճառները:

Ձևական բնույթ են կրում մակդիրները դասակարգումներն ըստ հնչյունային տեսակետի, պարզ, բարդ, բաղադրյալ կազմության, խոսքի մասերի (ածական, գոյական, դերբայ և այլն), նախադասության մեջ ունեցած իրենց դերի. (որոշիչ կամ պարագա, հազվադեպ՝ լրացում կամ ենթակա, ստորադասական նախադասություն) ազատ, կայուն բառակապակցության: (Краткая Литературная Энциклопедия, 1975)

«Ռճաբանական բառարանի» դասակարգման մի մասը կատարված է մակդիրների կազմակերպական սկզբունքների հիման վրա: Այսպես. ուղղակի և փոխաբերական մակդիրները ցույց են տալիս, թե պատկերը նկարագրվում է անվանական, թե փոխաբերաբար արտահայտված միավորներով: Դասակարգ-

ման մեջ հաշվի են առնվում որպես մակդիր հանդես եկող բառերի քանակը. եթե մակդիրն արտահայտված է մեկ բառով, ապա այն կազմությամբ պարզ, իսկ եթե մեկից ավելի բառերով՝ ապա այն բաղադրյալ մակդիր է: (Տես նաև *Словарь Лингвистических Терминов*, 1966, որտեղ նույնպես առանձնացվում են փոխաբերական և կրկնաբանական մակդիրները) Մակադրյալի համեմատությամբ մակդիր դիրքը նույնպես ունի ձևական բնույթ: Այստեղ առանձնացվում են նախադաս և ետադաս մակդիրներ: Մեր կարծիքով գունային մակդիրներ տարբերակելը նույնպես կատարված է ձևական սկզբունքով, քանի որ գույները խորհրդանշում են տարբեր ապրումներ, կամ միևնույն գույնը տարբեր համատեքստում կարող է ունենալ ոչ ավանդական նշանակություն:

Մյուս կողմից *անհրաժեշտ* և *զարդարող* (epitheton necessarium և epitheton ornans) մակդիրները¹² լուսաբանում են նշանակյալ բառը տարբեր կողմերից: Առաջիններն իրենց որոշչային գործածությամբ առարկան բնութագրում են իր օբյեկտիվ հատկանիշներով, որպեսզի տան իրական, տվյալ լեզվով խոսողների համար՝ կիրառական պատկեր, մինչդեռ զարդարող մակդիրներն օգտագործվում են որպես հեղինակի ինքնադրսևորման, հուզարտահայտչական միջոց: Սրանց հետ են կապված նաև մակդիրների հաջորդ գույզը՝ *բնական* (epithete de nature) և *իրադրական* (epithete de circonstance) մակդիրներները:¹³ Առաջինների կիրառման պատճառն այն է, որ արտահայտում են երևույթից անբաժան, այլ կերպ ասած՝ էական, հատկություն և ունեն անհրաժեշտ մակդիրների կարգի գործառույթ, իսկ իրադրական մակդիրներն օգտագործվում են խոսքային տվյալ միջավայրում ընդգծվող երևույթն առավել ցայտուն դարձնելու համար և, ըստ նշանակման, տվյալ իրավիճակին հատկորոշ՝ իրադրական գործառույթություններն են: *Նկարագրող* և *վերաբերմունք արտահայտող* մակդիրները՝ Adjectia der Bezeichnung և Adjectiva der Beziehung¹⁴ կիրառվում են նշանակելու առարկաներին ավանդաբար կցված հատկանիշներ, որը ցույց է տալիս լեզվամտածողության փոխանցումը ժամանակի ընթացքում և առարկաներին տվյալ համատեքստում կցված հատկանիշներ, որոնք զարդարում, ընդգծում են այն և դրանով ձեռք բերում զարդարող և իրադրական մակդիրների գործառույթը:

Չարենցի ստեղծագործությունների քննարկումներից վեր հանած մակդիրներից չորսն ունեն գործելու հստակ նշանակումներ. այսպես *Նոր, ստեղծագործության բովանդակությանը ներդաշնակ, նկարագրական, հուզական* մակդիրները նախորդներից տարբերվում են խոսքին ճոր լիցք ու թարմություն հաղորդելու, ստեղծագործության բովանդակությունը ներդաշնակ երանգներով լրացնելու, նշանակալ առարկային պատկերավոր նկարագրություն և հուզականություն տալով:

Մակդիրների դասակարգումն ըստ ոճաբանական հայեցակետերի ունի որոշակի գործառույթ. ոճաբանական տեսակետից մակդիրները խոսքին բերում են ուժգնություն և դիպուկություն, ինչպես նաև երևույթն ընդգծում են հակադրության միջոցով: (Голыб, И. Б. 1976) Լեզվաբանական տերմինների բառարանում հինգ խմբի բաժանված մակդիրներից երկուսը՝ *բացատրականներն* ու *ստորացուցիչներն* ինքնին ցույց են տալիս իրենց գործառույթը: (Словарь Лингвистических Терминов, 1966)

«Ոճաբանական բառարանի» դասակարգումը նույնպես պարունակում է մակդիրների գործածության կազմման ձևերի և պատճառների տարրեր: Նրանում ըստ բնույթի, կազմության, շարադասության և բովանդակության բաժանված մակդիրներից մի քանիսն ունեն խոսքի մեջ կիրառման վառ արտահայտված պատճառներ: Ըստ բովանդակության զատված մակդիրներից *նկարագրականներն* ու *քնարականներն* ուղղված են խոսքը դարձնելու պատկերավոր և հուզական: *Չափազանցական և նվազական* մակդիրներն ուժացնում կամ մանրացնում են առարկայի «չափերը» որպեսզի կատարեն պատկերն առավել գունեղ դարձնելու, ընդգծելու իրենց գործառույթը:

Չատկանշական է թվում այն, որ մասնավոր և մշտական մակդիրները ձևական և գործառութային այս դասակարգմանը կարող են պատկանել միայն իրենց առանձին դրսևորումներով: Եթե որևէ հեղինակին բնորոշ է, ըստ մակադրյալ բառի, (տես Խլդաթյան Ֆ.Յ., 2000, էջ 116) *առարկայական և գործողության* մակդիրների կիրառումը, ապա նման կերպ բաժանված մակդիրները կդասվեն ձևական հիմունքներով առանձնացվող մակդիրների շարքը, սակայն, մինևույն հեղինակի մոտ օգտագործված մակդիրները իմաստաբանական առումով դիտարկելիս առանձնանում են դրանց կիրառման

պատճառները, և հետևաբար, տվյալ համատեքստում ունեցած հեղինակի միտումը:

Գորնֆելդն, օգտվելով տրամաբանության վերլուծական և սինթետիկ դատողություններից, մակդիրները վերագրում է վերլուծական դատողություններին, որոնք «կրկնում են բնորոշվող հասկացության մեջ առկա հատկանիշ»: Այս կարգի մակդիրներով լի է նաև XVIIIդ. անգլիական պոեզիան, որոնցում հետևյալ արտահայտությունները կոչվում են նաև «պատրաստի կլիշեներ».

floating clouds, lucid stream, flowery vale, umbrageous grots, shady grove, dusky hill, purling rill, smiling fields և այլն: (Горнфельд А. 1911, с.340)

Մակդիրների բազմազանության, գործառնության և բանասիրության մեջ ունեցած տեղի հարցերին անդրադարձել է նաև ռուս տեսաբան Ժիրմունսկին: (Жирмунский, В. М., 1977, с.355-361) Նա մակդիրներին տալիս է լայն ու նեղ իմաստներ: Առաջինները համարում է «որոշիչներ, բանաստեղծական ոճի հնարներից մեկը»: Այս առումով հիշատակվում է Տոմաշևսկիի այն մոտեցումը, որ մակդիրները մակադրյալին խորթ հատկանիշ չեն ներմուծում: Ա. Շալգինը զարգացնում է այս մոտեցումը, նշելով, որ մակդիրները միայն «ընդգծում են առարկայի հատկանիշներից մեկը՝ այն, որը տվյալ դեպքում անհրաժեշտ է բերել առաջին պլան» (Шалгин А., 1916, с.37, երևույթի ընկալման լայն իմաստային դիրքերից են մակդիրներն ուսումնասիրել Ձելենցկին և Լյուկյանովսկին՝ Зеленецкий А. 1913, Люкьяновский Б., 1920)

Մյուս կողմից՝ ի հակադրություն մակդիրների վերլուծական (այսինքն՝ նշանակյալ բառի մեջ պարունակվող) տարբերակման, Վ. Ժիրմունսկին ցույց է տալիս, որ բանաստեղծական բնորոշումները կարող են նշանակյալ հասկացությանը հաղորդել նոր, հարստացնող հատկանիշ (հմտ. белый снег, синее море և бурый снег, розоватое море): Այս հակադրումը բերում է մակդիրների առավել խորքային տարբերության բացահայտման, ըստ որի առաջին խմբում որոշիչները նշանակում են մակադրյալ հասկացությանը բնորոշ, կարծես մշտական հատկանիշ, մինչդեռ երկրորդում՝ («նեղ» կոչված) մակդիրներով հատկանիշը մակադրյալին վերաբերվում է պատեհաբար և ընդգրկում վերջինիս մասնավոր կողմերից մեկը: Որոշ դեպքերում՝ կապված համատեքստի

իմաստային բնույթի հետ, առաջին դասին պատկանողները կարող են անցում կատարել մակդիրների դիտարկման երկրորդ՝ ավելի նեղ, տվյալ հեղինակին ներհատուկ խմբի: Վերջիններս էլ հասարակական հնչեղության շնորհիվ դառնում են ընդհանուր, համալրվում ազգային լեզվամտածողության նրբերանգներով և աստիճանաբար փոխակերպվում մշտական, հարաբերակա-
նորեն կայուն, մակդիրների:

Առանձին և մեծ խումբ են կազմում մշտական, կամ կայուն, մակդիրները: Մշտական մակդիրները պատահաբար չեն առաջացել. նրանք անցել են ժամանակի ընտրության բովով: Հնագույն քնարա-էպիկական ստեղծագործու-
թյուններում մակդիրները դեռևս չէին գիտակցվում որպես մշտական ու կայուն: Երգեցիկ ստեղծագործություններում կիրառված այս մակդիրներն աստիճանա-
բար դառնում են մշտական և անփոփոխ օգտագործվում միևնույն մակադրյալի
հետ: Այս կապն այնքան ամուր է, որ պահպանվում է նույնիսկ հակասական
դեպքերում: Մշտական են կոչվում այն մակդիրները, որոնց համակցությունը
որոշյալ բառի հետ առանձնանում է կայունությամբ (conventional, standing
epithets, e.g. green wood, lady gay, fair lady, fair England, salt seas, salt tears,
true love my true love, my own true love, sweet love, wide world):¹⁵

Միևնույն մակադրյալի հետ հանդես գալը, որը մշտական մակդիրների
համար առանցքային առանձնահատկություն է, վաղուց է գիտակցվել և
արտացոլվել մի շարք հայ և ռուս հեղինակների աշխատություններում: Ընդգծե-
լով, որ մշտական մակդիրներն արտահայտում են ժողովրդական մտածողու-
թյուն՝ Ֆ. Խլաթյանը նշում է, որ նրանք «գործածվում են միշտ միևնույն
մակադրյալի հետ»։ օրինակ. *վարդ* շուրթեր, *ամուսն* Սիեր, *աղի* արցունք և այլն:

Կարևոր է այն հանգամանքը, որ մշտական մակդիրներն արտահայտում են
ժողովրդի գեղարվեստական մտածողության բնորոշ գծեր: Յուրաքանչյուր
ժողովրդի բանահյուսության մեջ նրանք տարածված երևույթներ են: Հայերե-
նում տիպիկ մշտական մակդիրները սերում են, օրինակ, Սասնա ծռերից,
մանկական ստեղծագործություններից. *կարմիր* արև, *հրեղեն* ձի, *ծով* աչքեր, *օր*
ու արև որդի և այլն: Մշտական մակդիրներ տարբերում են նաև այլ գործեր:
(Դալլաքյան Ռ. Հ. 1971, Словарь Литературоведческих Терминов, 1974,

Ի հակակշիռ մշտական մակդիրների, տարբերակվում են նաև մասնավոր բնույթի մակդիրներ: Նման մակդիրներն առանձնացնում են տվյալ մտածելակերպին բնորոշ որակները: Ըստ էության այս խումբն է ենթադրվում Պ. Պողոսյանի առաջադրած *խոսքային* մակդիրներ տեսակով, որը հակադրված է լեզվական (հմմտ. մշտական) մակդիրներին: (Պողոսյան Պ.Ս. 991, էջ 46-47) Մշտական և մասնավոր մակդիրներն ընդհանրության եզրեր ունեն ժիրմունակու առաջադրած լայն և նեղ մակդիրների հետ: Նրանց դիտարկումը գեղարվեստական տեքստի վերլուծության կարևոր մաս է:

Հայ և ռուս գրականագետներն անդրադարձել են մակդիրների փոխաբերական բնույթին: Էդ. Ջրբաշյանն, օրինակ, մշուժ է, որ փոխաբերական մակդիրների մոտ միշտ առկա է բառի որոշակի իմաստափոխություն. որևէ նմանության կամ զուգահեռի հիման վրա բառը տվյալ համատեքստում ձեռք է բերում նոր, անուղղակի իմաստ, որի շնորհիվ բնորոշումը դառնում է ավելի պատկերավոր և տպավորիչ: Հակադրելով Չարենցի ստեղծած մակդիրները՝ ա) *արևահամ* բառ, *արմանման* ծաղիկներ, *արմավառ* Հայաստան, *լուսապսակ* ճակատ և բ) *հեզաճկուն* պար, *աղբաձայն* երգ, *կարոտած* սիրտ, *մուգ* երկինք, *ջինջ* ջրեր, լեզվաբանը ցույց է տալիս, որ առաջինները հասկացվում են անուղղակի, պատկերավոր առումով: (Ջրբաշյան Էդ. 1980, էջ 233) Պ. Պողոսյանի մոտ՝ որպես առածին տեսակ, նույնպես միմյանց են հակադրված փոխաբերական և ոչ փոխաբերական մակդիրները: (Պողոսյան Պ. 1991, էջ 46-47)

Ռուս տեսաբանները նույնպես զատում են փոխաբերական մակդիրները, որոնք «ոչ միայն բնորոշում են առարկան կամ ընդգծում նրա որևէ կողմը, այլև ուրիշ առարկայից կամ երևույթից նրա վրա են բերում նոր, լրացուցիչ որակ».
(Словарь Литературоведческих Терминов 1974, с. 469-470)

Բառարանն այն միտքն է արտահայտում, որ մակդիրներն ընդգծում են ոչ միայն առարկային հատուկ, այլև հնարավոր, մտացածին, փոխանցված գծեր և հատկանիշներ: Սա հիմք է տալիս մակդիրը դասել դարձույթների խմբին: (Այս մասին տես նաև Голуб, И. Б. 1976, с. 515, որտեղ բերվում են նաև փոխանվանաբար կիրառվող մակդիրների օրինակներ, ինչպես նաև Жирмунский, В. М., 1977, с. 355-361) Փոխաբերական մակդիրների

օրինակներով հարուստ է նաև Ի. Գոլուբի աշխատությունը, որտեղ տրվում է նաև որոշիչների և փոխաբերաբար գործածվող մակդիրների համեմատություն.

Лимонный сок Лимонный свет луны

Седой старик Седой туман

Лакей лениво прислуживал хозяину Река лениво катит волны

Մակդիրների համապարփակ դասակարգման բացակայության դեպքում կարելի է միայն հուսալ, որ երևույթի հետագա ուսումնասիրությունները ոչ միայն կառաջադրեն ամբողջացնող դասակարգումներ և ցույց կտան մակդիրների պատմական զարգացման փուլերը, այլև կհետևեն դրանց ծավալման միտումներին համաժամանակյա գրականության մեջ:

Բազմաթիվ գրականագետներ ու լեզվաբաններ, անդրադառնալով մակդիրների տեսությանն ու արտահայտելով սեփական կարծիքները, հաճախ վկայակոչում են Ա. Ն. Վեսելովսկու համընդհանուր «Из Истории Эпитета» աշխատությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1895թ.: (А. Н. Веселовский, Историческая поэтика, М-1989) Աշխատությունը ոչ միայն տարբեր հայեցակետերից բնութագրում է մակդիրների գործածությունը, այլև առաջադրում գաղափարներ, որոնք որոշիչ դեր են ունենում մակդիրների տեսության զարգացման գործում: Հեղինակն ի սկզբանե շարադրում է աշխատության նպատակները. երևույթի պատմական զարգացման ժամանակագրության փոխարեն տալ լրացումներ հայցող հարցադրումներ:

Մակդիրը «բառի միակողմանի բնորոշում է, որը կամ նորովի է ներկայացնում առարկայի նշանակությունը, կամ ընդգծում է նրա ինչ-որ բնութագրական որակ»:¹⁶ Հեղինակն առաջին տեսակի մակդիրները կոչում է *կրկնաբանական*, որն առանձնացնում են և ուրիշները: Մյուս խումբն անվանում է *պարզաբանող*, որի հիմքում ընկած են երևույթի բնորոշման համար էական կամ գործնականում առարկային լավագույնս բնութագրող հատկանիշներ: Այս առումով նշվում է, որ առարկայի էական հատկանիշի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նրա հարաբերականությունը:

Հիշարժան են նաև պարզաբանող մակդիրների երկու ենթատեսակներ. *փոխաբերական* և *սինկրետիկ*. Առաջինները ենթադրում են տպավորությունների զուգահեռականություն, համեմատում և տրամաբանական հավասարեցում: Երկրորդ տեսակի մակդիրներն ունեն ֆիզիոլոգիական սկզբունքներ:

Մարդկային տպավորությունները լրանում են զգայարաններով ու հաճախ խոսքի մեջ արտացոլվում չտարորոշված: Սակայն նրանցում զգայական տպավորություններից առաջացած և «երանգների գիտակցաբար համադրմամբ» ծագած մակդիրները դժվար է տարբերել: Դրա համար պահանջվում է բազմազան և տարբեր ժամանակներին հատուկ օրինակներ:

Սյուս խումբը *մշտական* մակդիրներն են, որոնց առաջացման հետ է կապված մակդիրների դերը. «ընդգծել առարկայի այն գիծը, որը թվում է բնութագրական, էական, ցուցադրական»: Աշխատությունը հարուստ է մշտական մակդիրների օրինակներով, որոնք հիմնականում վերցված են բանահյուսությունից, հատկապես՝ հունական, սլավոնական և միջնադարի եվրոպական էպոսներից: Զուգահեռներ են տարվում *գունային* մակդիրների միջև, քանի որ վերջիններս նույնպես կապված են ազգային մտածողության հետ և թվում է, թե ձեռք են բերում կայուն բնույթ: Մակդիրների մշտականությունը (և փոփոխականությունը) համեմատվում է ծեսերի, ավանդույթների հետ, որոնք «քայքայվում են ժամանակի ընթացքում և զիջում բազմազանությանը»: (նույն տեղում, էջ 64) Վեսելովսկու սույն աշխատությունն ուսումնասիրելիս մշտական մակդիրների մասին պարզվում է, որ մշակման և ընտրության շնորհիվ պահպանված մշտական մակդիրները չեն կարող լինել բազմաբնույթ կամ բազմաթիվ: Եվ ընդհակառակը, ուշ ժամանակների ստեղծագործությունները որպես կանոն ունենում են առավել բազմազան, անհատական (ոչ թե՝ ազգային-բանահյուսական) երանգներ:

Մակդիրների զարգացման պատմությունն այնուհետև տարվում է ներքին և արտաքին հուններով: Ներքին զարգացումը վերաբերվում է *բնորոշումների ընդհանրացմանը*, որը «հնարավորություն է տալիս միակցել մի շարք առարկաներ»: (նույն տեղում, էջ 67) Սրանով հեղինակն ի նկատի չունի այն գործընթացը, որով, օրինակ ֆրանսերեն *chétif*-ը (լատ. *captivus* – գերի) ձեռք է բերել իր ժամանակակից նշանակությունը՝ խղճուկ, վտիտ կամ հունարեն *πολυχορδος* ([պոլիկորդոս] – բազմալար) որում տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում և այժմ վերաբերվում է նաև ֆլեյտային և սոփակի երգելուն: Այստեղ բնորոշումների ընդհանրացումը վերաբերվում է խոսքի բանաստեղծական և բանահյուսական օգտագործմանը: Ապա քննարկվում է գույների դերը խոսքի մեջ, որի արդյունքում ձևավորվել է ժողովրդական սիմվոլիկա: Ներքին

զարգացման օրինակների ավարտին այն միտքն է արժարժվում, որ այս բնորոշումները հազիվ թե համապատասխանաբար արտահայտվեն գեղանկարչության մեջ:

Արտաքին զարգացումն ավելի շուտ վերաբերվում է «մշտականության այս կողմին», ի տարբերություն նախապատմական քնարա-էպիկական ստեղծագործություններին, որտեղից սերող մշտական մակդիրներն այլևս պատկերավոր տպավորություն չեն առաջացնում: Ժամանակի ընթացքում կուտակվում են նոր մակդիրներ, որոնք ոչ թե մեկ անվանման տարբեր բնորոշումներ են (удалый, добрый молодец; перелетные, серые, малые уточки), այլ միանշանակ, իմաստով մոտ (доблестный и великий՝ հուճական էպոսում ամուսնու մասին, не поевшая, не отведавшая пищи՝ Պենելոպայի մասին): Առաջացնում հին ֆրանսիական և գերմանական էպոսներին հատկանշական, նոր զուգավոր մակդիրների, խումբ (бодрый и радостный, храбрый и смелый, печальный и унылый, истинный и верный): Հեղինակը ենթադրում է, որ զուգավոր մակդիրները հանդիսացել են մշտական մակդիրների զարգացման և քայքայման պատճառ, քանի որ տեքստի տրամադրությունն ընդգծելու, ավելադրության նախնական ձևեր լինելու հետ միասին, նրանցում առկա է ավելորդության տարր: Առավել ուշ ժամանակի է պատկանում *բաղադրյալ* մակդիրների առաջացումը: Այս *նկարագրական բնորոշումները* դառնում են մի ամբողջ նախադասություն. օրինակ՝ ֆր. En lui a chevalier molisme bon, vaillant chevalier, miudre de li fu adonc trove [շատ լավ ասպետ, առաքինի ասպետ, նրանից լավը երբեք չի եղել], կամ Damnes Deus...le magne rei de Trinitat [Տեր Աստված, սուրբ երրորդության մեծն արքա], vrai pere poesteis, ... qui le mont doit sauver [ճշմարիտ, ամենակարող Աստված, որը պիտի աշխարհը փրկի] (նույն տեղում, էջ 70) Աշխատության մեջ առանձին խումբ են կազմում սկալդերին հատկանշական *մակդիր-պատկերները*. кубок ветров՝ երկինք, путь чаяк՝ ծով, և այլն:

Մակդիրների շուրջ կատարված այս բազմաբնույթ աշխատությունն ավարտվում է՝ առաջադրելով մի քանի դրույթներ, որոնք ոչ միայն լուսաբանում են մակդիրներն ընդհանրապես, այլև էական նշանակություն տալիս մեր

ուսումնասիրություններին: Միջնադարյան սիրո պոեզիան պարզունակ կոչելը մեր գնահատականն է. այն, ինչ մեզ հասել է երևակայությանը ոչինչ չասող «բանաձևի» տեսքով, մի ժամանակ եղել է թարմ և առաջացրել տարբեր ասոցիացիաներ: Մյուս դրույթն այն է, թե «մակդիրները սառչում են, ինչպես սառել են չափազանցությունները»: Կան պոետներ, որոնք այս առումով այլևս նորություն չեն փնտրում, իսկ ոմանք էլ գտնում են նորանոր գույներ: Բացի անհատականությունից կա նաև պատմության դպրոցը, որը բանաստեղծական լեզվի համար նյութեր է ընտրում, որի օրինակներ են ռոմանտիկ պոեզիայի և քրիստոնեական աշխարհընկալման կնիքը մակդիրների վրա: Աշխատությունն ընդգծում է, որ վերջինիս անդրադարձել են տարբեր տեսակետներից, սակայն ոճական կողմով այն մնում է բաց:

Մակդիրների շուրջ կատարված ուսումնասիրությունները մեզ բերում են այն համոզման, որ որքան ուշադրություն դարձվի տվյալ երևույթի էության բացահայտմանը, որքան առավել կարևորվի նրա դերը խոսքի (լայն իմաստով) հաղորդակցական գործառնություն, այնքան խոր և ընդարձակ հնարավոր կլինի ներկայացնել պատկերաստեղծման գործում բերած նրա հավելյալ՝ մակադրական արժեքը, ընթերցողն առավել զինված կլինի որևէ երկի նշանակության հայտնաբերման, հեղինակի միտումն ընկալելու իր փորձառության ընթացքում:

Վերոհիշյալ աշխատությունների քննությունը և դրանցից ածանցվող ենթադրությունների ընդհանրացումը մեզ հանգեցրել է մակդիրների գործառական երկկողմանիության տեսակետին: Մի կողմից մակդիրներն իրենց հուզարտահայտչական երանգներով նպաստում են ստեղծագործության գլխավոր թեմայի ամբողջական ներկայացմանը, վեր հանում նրանում գործող առանցքային կերպարի էական նկարագիրը, պատկերում նրա բնութագիրը՝ դրանով իսկ կատարելով իրենց *ներկայացման* գործառնությո: Մյուս կողմից, միաժամանակ, մակդիրներն ի հայտ են բերում հեղինակի երևակայական ներաշխարհը, ստեղծում այնպիսի պատկերներ, որոնք ունկնդրին (ընթերցողին) հրավիրում են ինքնատիպ երկխոսության: Հեղինակն իր խոսակցի հետ կիսում է ոչ միայն իր հուզական ապրումները, այլև մտածական գործունեության ուղղությունը, որն էլ իրագործում է մակդիրների *հաղորդակցման* գործառնությո: (հմտ. սուբյեկտ-օբյեկտ և սուբյեկտ-սուբյեկտ շղթայական հաղորդակցումը $S \rightarrow O$, և $S \rightarrow S$, էդ. Աթայան, 1981, էջ 295-300)

Որպես ռճաբանական հնար, մակդիրը հետազոտողի տրամադրության տակ եղած գործիք է, որը մատնանշում է որևէ տեքստում սերմանված ճանաչողական տարրերի առկայությունը, այն օժտված է մեկնաբանական լիցքերով և կարևոր միջոց է հանդիսանում տեքստաբանական քննության մեջ: Իր այս առումով մակդիրներն առանձնահատուկ արժեք ունեն ինչպես այլ, այնպես էլ աստվածաշնչյան տեքստի մեկնության գործում: Մակդիրների ներկայացման և հաղորդակցման գործառույթը, դիտարկելով իրենց ամբողջականության մեջ և ուղղածիզ համատեքստի ընձեռած նախադրյալների հիման վրա, հետազոտողին հավելյալ ճանաչողական նրբերանգներ է հաղորդում: Այսպիսով մեկ անգամ ևս կարևորվում է մակդիրների հետագա ուսումնասիրության կարիքը և ընդգծվում տեքստի մեջ ունեցած նրանց ներկայացման և հաղորդակցման արժեքը:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

¹ Երևույթի ակունքների մասին տրվում է հետևյալ բնութագրումը. «Մակդիրը ծագել է բանավոր բանաստեղծական ստեղծագործությունների մշտապես հանդիպող հատկանիշների ընդհանրացմամբ, պատմական հարաբերությունների ամրապնդմամբ, իդեալականացմամբ: Անհատական ստեղծագործական սկզբունքների զարգացումը քայքայում է ժողովրդական բանահյուսության մշտական մակդիրների համակարգը: Մարդուն են վերագրվում բնության երևույթների հատկությունները: (Большая Советская Энциклопедия, с.221) Տերմինի սկզբնական գործածություններում երևույթն ընկալվել է բանաստեղծական բնորոշման լայն իմաստով՝ ըստ էության անտեսելով մակադրյալ բառին որևէ նոր հատկանիշ ավելացնելու նրա կարևորագույն գործառույթը: Այս պատճառով հնում մակդիրները դիտվում են որպես ավելադրության կամ ընդլայնման մասնավոր դեպք: Ռոմանտիզմն արդարացրեց խոսքի անհատական գործածությունը: Շուտով բանաստեղծը *сине море*-ի փոխարեն տեսնում է *розоватое море*, *белый парус*-ի փոխարեն՝ *рижый парус* և այլն: (Жирмунский, В. М., 1977)

² Հարկ է մեջբերել այն կարծիքը, թե մակդիրի տեղը մյուս դարձույթների մեջ, նրա ազդեցությունը լեզվի բառապաշարի հարստացման (հոմանիշների, հականիշների, բազմիմաստ բառերի զարգացման) վրա դեռևս բավարար աստիճանի պարզաբանված չեն: (Краткая Литературная Энциклопедия, М-1975, с.921) Ժամանակակից ռուսական տեսությունը նույնպես այն կարծիքին է, որ առայժմ գիտությունը չի հասել մակդիրների մշակված տեսության, գոյություն չունի մակդիրների զանազան տեսակների բնութագրման համար

անհրաժեշտ միանշանակ տերմինաբանություն: (Голуб И., Стилистика Современного Русского Языка, М-1976, с.152)

³ Հետաքրքրական է, որ Արիստոտելի մոտ «մակդիր» տերմինը մենիմաստ գործածությամբ է հանդես գալիս: Այն զանազան երանգներ է ստանում հաջորդ դարերում, Պլուտարքոսի մոտ, որը բառին տալիս է «չափազանցքած» իմաստ: (ըստ Փոլադյան Ս., 2000) Սահմանումների տարբերությունները կարելի է բացատրել նաև նրանով, որ ժամանակի ընթացքում բանահյուսական, բանաստեղծական և գրական ստեղծագործություններում փոփոխվել է մակդիրի էությունը, որից էլ գալիս է այս զանազանությունը: (Арнольд, И. В. "Стилистика Современного Английского Языка", Л-1973, с.151-153)

⁴ Խոսելով Ն. Ջարյանի մոտ գործված մակդիրների մասին Պ. Սևակն այն միտքն է հայտնում, թե «էպիտետի ընտրության մեջ, ավելի քան մի այլ տեղ, պարզ երևում է հեղինակի ճաշակը և վարպետությունը, էպիտետի ընտրությունը պահանջում է ուժերի գերազույն լարում, թույլ դիմադրության ճանապարհով չընթանալու խիզախություն» (Արիստակեսյան Ա., 1984)

⁵ Տերմինի մուտքը ռուսերեն տեղի է ունեցել գերմաներեն Epitheton-ի միջոցով, որն իր հերթին հունարենի փոխառություն է: (Этимологический Словарь Русского Языка, 1987) Բացի բառացիորեն прилаженный, прибавленный համարժեքներից, επιθετος [էպիթետոս] (επιτιθημι) [էպիտիթեմի] բառը թարգմանվում է նաև «անբնական, արհեստական, որտեղից էլ հետագայում զարգանում են своеобразный, присвоенный («ինքնակամ, յուրացված») իմաստները: (Греческо-Русский Словарь по Бензелеру, Киев-1881 с.276) Տերմինի համարժեքներն են эпитет (ռուս.) adherent, epithet (անգլ.), Épithète (ֆր.), Epitheton, Attribut, Beifügung (գերմ.), Epiteto (իտալ.), որոնցում պարունակվում է հավելման նշանակությունը: (Խլղաթյան Ֆ., 2000, տես նաև Словарь Лингвистических Терминов, 1960, с.346, Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, 1967, էջ 43)

⁶ «Մակ»-ը (վրայ, վրան) ետոսկեդարյան հունաբան հեղինակների մոտ «դարձել է շատ սովորական նախամասնիկ» և համապատասխանում է հունարեն επι (վրայ) մասնիկին: Այն կովկասյան լեզուներից կատարված փոխառություն է, որով կազմվում են զանազան բառեր: (Աճառյան Հր., Հայերեն Արմատական Բառարան, էջ 230, նաև Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի, էջ 190, Հայոց Լեզվի Նոր Բառարան, էջ 494-495)

⁷ «էպիտետ-մակդիրը չի դառնում իր օբյեկտի լրացման ճորտը, այլ այն բառը, որի վրա հենմուն են, մակդիրը դառնում է նրանց նմույզը, հեծյալ էպիտետը արագացնում է բառի իմաստային հեքը, անգամ փորձում է այն լրացնելով լայնացնել, բացել, ճեղքել ներսից»։ (Սանթրյան Մ. 2000, էջ 92-93)

⁸ Ոճաբանության ուսումնասիրության ոլորտում ընդգրկվում են լեզվական բոլոր միավորները՝ սկսած լեզվի նվազագույն տարրերից մինչև խոսքի ամենաբարձր մակարդակը՝ իրենց պատկերավոր, արտահայտչական և

հուզական երանգավորումներով: Եվ ի շարս լեզվի ու խոսքի բոլոր ոճերի, լեզվի նյութական բոլոր միջոցների, լեզվական (քերականական) ոճական այն բոլոր հնարների ու միջոցների, որոնք որոշակի ոճական գունավորում կամ գեղագիտական արժեք ունեն, բառային ու քերականական հոմանշության, ոճագիտությունն ուսումնասիրում է լեզվի պատկերավորության ու արտահայտչական միջոցները: (Եզեկյան Լ. 1999, էջ 4, 5)

⁹ Որպես հաղորդակցության միջոց (տեղեկատվական գործառույթ), մակդիրն ի գորու է բնութագրել զգայարաններով ընկալվող տարբեր առարկաների հատկություններ, ինչպես նաև միավորել ընկալման տարբեր ոլորտներ, այսինքն՝ լինել *սինեստեսիկ*: Բազմաթիվ մակդիրներ, նշելով կերպարի արտաքին կողմերը, միաժամանակ տալիս են վերջինիս հոգևոր կամ սոցիալ-հոգեբանական բնութագիր: Որպես շփման միջոց (հաղորդակցական գործառույթ), մակդիրն ի հայտ է բերում խոսողի (գրողի) զանազան հատկությունները: սեռը, տարիքը, ազգությունը, սոցիալական վիճակը, անհատական գծերը: Որպես տեքստի ներքին կազմակերպման միջոց (կառուցողական գործառույթ), մակդիրները գործում են միասին՝ տեքստին տալով «ներքին միակցման ուժ»: Մակդիրներն անկասկած մասնակցում են ոչ միայն բառային, այլև գեղարվեստական տեքստի առավել բարձր մակարդակներում, որն, այնուամենայնիվ, թերի է ուսումնասիրված: (Краткая Литературная Энциклопедия 1975, с. 921-923)

¹⁰ Ա. Մարությանի դիտարկմամբ, օրինակ, մակդիրները քերականական առումով համընկնում են որոշիչների և ձևի պարագաների հետ, սակայն դրանք չեն կարող նույնացվել, քանի որ խոսքի մեջ կիրառվում են տարբեր գործառույթներով: Հետևաբար առարկաների ու երևույթների տարբերակիչ հատկանիշներն արտահայտող տրամաբանական որոշիչներից պետք է առանձնացնել գեղարվեստական որոշակի արժեք ու դեր ունեցող մակդիրները: (Մարության Ա., 1979, էջ 154)

¹¹ Քիչ չեն այն դեպքերը, երբ դժվար է հստակ սահմանագիծ դնել տրամաբանականի և գեղարվեստականի միջև՝ անտեսելով խոսքային իրադրությունը, գեղարվեստական համատեքստը, այն ընդհանուր գեղագիտական մթնոլորտը, որում օգտագործված է տվյալ միավորը: Տրամաբանական բնորոշումները նշում են հատկանիշ ի հակադրություն նույն կամ ուրիշ առարկաների մյուս հատկանիշների և համընկնում են որոշիչների հետ: Մինչդեռ գեղարվեստական բնորոշումները (մակդիրներն) օժտված են պատկերավորությամբ, զգացմունքային երանգով և այլն: (Ջրբաշյան Է. 1972, 1980, Դալլաքյան Ռ., 1971) Հատկանշող միավորների (որոշիչ և մակդիր) երկակի գործառության խնդրին անդրադառնում է Լ. Կրուպչանովը, *русский* բառի վրա ցուցադրելով տրամաբանականի և գեղարվեստականի տարանջույմները. *Великий, могучий, правдивый и свободный русский язык* (Տուրգենև), այստեղ *русский* բառը կարող է դիտվել որպես մակդիր, քանի որ

այն ավարտում է հնչերանգային աստիճանավորումը և դրանով իսկ ստանում հատուկ ոճաբանական նշանակություն: (Словарь Литературоведческих Терминов, 1974)

¹² Երկար ժամանակ մակդիրը նշանակել է երկու երևույթ. որոշիչ (определение) (epitheton necessarium - անհրաժեշտ մակդիր) և ինքնին մակդիր (epitheton ornans - զարդարող մակդիր): (Краткая Литературная Энциклопедия 1975, с.921-923: Այս երկակի տարբերակման համար տես նաև Словарь Иноязыческих Выражений и Слов Употребляющийся в Русском Языке Без Перевода, 1966, с.458) Մակդիրների զարդարող բնույթն անվանող epitheton ornans արտահայտությունը ռուսերեն անցել է լատիներենից: (Толковый Словарь Русского Языка, 1940 с.142) Ներկայումս տերմինն իր առաջին նշանակությամբ չի գործածվում, իսկ երկրորդը կրել է զգալի փոփոխություններ. մակդիրը դիտվում է ոչ իբրև զարդարող հնար, այլ որպես տարբեր (տրամաբանական, հոգեբանական, լեզվաբանական, գրականագիտական և այլ) կողմեր ունեցող բազմաբովանդակ երևույթ:

¹³ Լեզվաբանական տերմինների բառարանում առաջադրված է մակդիրների տարբերակման մի սկզբունք, ըստ որի այսպես կոչված բնական (epithete de nature) մակդիրների արտահայտած հատկանիշներն անբաժան են առարկայից (le ciel immense - ահռելի երկինք) և հակադրվում են իրադրական մակդիրներին (epithete de circonstance), ըստ որոնց վերաբերվող հատկանիշը համատեքստային բնույթ ունի: (un joli visage - գեղեցիկ դեմք)» (Словарь Лингвистических Терминов 1960 с. 346)

¹⁴ Գերմանացի տեսաբանները մակդիրները բաժանել են երկու խմբի. Adjectia der Bezeichnung և Adjectiva der Beziehung (նկարագրող և վերաբերմունք արտահայտող մակդիրներ): Նրանցից Գոտշալը (նշված է, որ «առանց որևէ հիմնավորման») առաջինները հավասարեցնում է մշտականներին, երկրորդները՝ զարդարողներին, որոնց համար փոխաբերականությունն անհրաժեշտ պայման է: (Энциклопедический Словарь, 1904)

¹⁵ Տարբերվում են մշտական մակդիրների երեք տեսակ. ա) կրկնաբանական, որոնք նշում են տվյալ առարկայի համար անհրաժեշտ հատկանիշ. (soft pillow, green wood), բ) գնահատական (bonny boy, bonnie ship, bonnie isle, faulse steward, proud porter) և գ) նկարագրական (silk napkin, silver cups, long tables): (Арнольд, И. В., 1973, с.153)

¹⁶ Այս տեսակետին է հարում նաև Տոմաշևսկիի սահմանումը, որի մոտ բանաստեղծական բնութագրումը չի ներմուծում մոր, բնութագրվող բառում բացակայող, հատկանիշ: Այն հաղորդակցի ուշադրությունն ուղղում է տվյալ առարկայի հատկանիշի վրա կամ արտահայտում հեղինակի վերաբերմունքը դրա նկատմամբ: (Томашевский Б. Поэтика, 1930, с.34) Այս դրույթը մոտ է նաև մակդիրների տարբերակման ժիրմունակու առաջադրած լայն իմաստին: (Жирмунский, В. М., 1977, с.360)